

րած մեծ Անապատի ճգնաւորներուն: Կը պատմէ Դաւրիժեցի, թէ հոն «ի միաբանից Մեծ Անապատին ոմանք արեղայք սկսան դաս առնուլ զԱրտաքին գիրքն ի Ներսէս վարդապետէն»: Բայց որովհետեւ «գործնական առաքինութիւնն յարգոյ եւ նախապատիւ էր առ նոսա, զի գհոգիս զարդարելոյ փոյթ ունէին եւ ոչ գրան», այս պատճառաւ ալ «ոմանք ի դաս առնողացն յետս կացին», աւելի ճիշդ՝ այն ծանր դասախօսութեանց խեղահաս չկարենալով ըլլալ, հրաժարեցան:

Այդ արեղաներու թուին մէջ էր «ոմն արեղայ տէր Մեղքիսէթ անուամբ», Արարատեան աշխարհի Վժան գիւղէն: Ասիկա չթուլացաւ «յընթերցմանէ արտաքին գրոց» եւ շարունակեց լսել Ներսէս վարդապետի դասախօսութիւնները. եւ երբ թողուց Ներսէս Մեծ Անապատն եւ զնաց Լիմ կղզին, հետեւեցաւ իր քայլերուն Մեղքիսէթ: Այս տեղ Մեծ Անապատի կարգերով բացաւ Մոկացին նոր անապատ մը եւ շարունակեց իր դասախօսութիւնները: Ունէր իրեն ունկնդիր հինգ միաբան եղբայրներ, անոնց թուին մէջ էր նաեւ Մեղքիսէթ: «Ամենեքեան ի ձեռս առին գիրս արտաքինս եւ սկսան ջանիւ կարդալ». բայց նաեւ այս անգամ յիշեալ ուսանողները երկու տարի ետքը «ձանձրացեալք յետս կացին յընթերցմանէ արտաքին գրոց». միայն Մեղքիսէթ գտնուեցաւ հաւատարիմ իւր ուսուցչին որ ձեռքէ չհանեց «արտաքին գրքերը», այլ